



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ԽՈՐՀՈՒՐԴ

### ՈՐՈՇՈՒՄ

23 դեկտեմբերի 2020 թվականի

թիվ 128

քաղ. Մինսկ

#### Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի

2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման մեջ

փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրի 7-րդ հոդվածին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 84-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի «Բժշկական կիրառության դեղամիջոցների գրանցման եւ փորձաքննության կանոնների մասին» թիվ 78 որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) «բ» ենթակետում «մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը (Ռուսաստանի Դաշնությունում՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը)» բառերով:

բ) «գ» կետում «մինչև 2016 թվականի հունվարի 1-ը» բառերը փոխարինել «մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը» բառերով:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի հերթական նիստում քննարկման ներկայացնել Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի աշխատանքի տեխնիկական սահմանափակումները վերացնելու միջոցառումների պլանը («ճանապարհային քարտեզ»):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո եւ տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

### **Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

<b>Հայաստանի Հանրապետությունից՝</b>	<b>Բելառուսի Հանրապետությունից՝</b>	<b>Ղազախստանի Հանրապետությունից՝</b>	<b>Ղրղզստանի Հանրապետությունից՝</b>	<b>Ռուսաստանի Դաշնությունից՝</b>
---	---	--	---	--------------------------------------

**Մ. Գրիգորյան**

**Ի. Պետրիշենկո**

**Ա. Սմայիլով**

**Ա. Նովիկով**

**Ա. Օվերչուկ**